
ՆԱՆՈՒՆ ԳԹԱՌԱՍ ՈՒ
ԲԱՐԵԳՈՒԹ ԱՍՏԾՈՒ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

ԱԿՆԵՐ ԱԿՆԵՐԵՒ

ԻՐԱՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈՆՁԻԱ

Պարսկերեն բնագրից թարգմանությունը՝
դոկտ. ՎԱՐԱՆԴ Ս.ՔՅՈՒՐԲԶՅԱՆԻ

Երևան - 2017

ԱԿՆԱՐԿ՝ ԻՐԱՆԻ ԱՐԴԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիմայական քերթություն

Նիմա Յուշիցը պահպանեց դասական քերթողական արվեստի տաղաչափական օրինաչափությունը, նաև որոշ տողերի հանգավոր ավարտը, սակայն յուրաքանչյուր տողում ավելացրեց կամ պակասեցրեց վանկերի թիվը: Նիմայից առաջ ոմանջ ձգտել են նույնն անել, սակայն Նիման էր, որ կյանքի կոչեց այս ոճը:

Շամլուական քերթություն (սպիտակ քերթված)

Ահմադ Շամլուն չափն ու կշռույթը հեռացրեց նիմայական բանաստեղծությունից: Նա համոզված էր, որ տաղաչափական կշռույթի փոխարեն, պիտի արտասանական-ասմունքային երաժշտականություն հաղորդել քերթվածին:

Սպիտակ քերթվածի մեջ կարելի է օգտվել նաև հանգերից, սակայն դա չի պարտադրվում: Շամլուից առաջ որոշ քերթողներ փորձել են այդպես ստեղծագործել, սակայն Շամլուի անվան հետ է կապվում այս ոճի հիմնումն ու զարգացումը:

Սյուրեռայիստական (գերիրապաշտական) քերթություն

Հուշանգ Իրանին հիմնադրեց սյուրեռայիստական ուղղությունը «Կովաջլոր» լրագրում: Որոշ գրաքննադատներ մոդեռն-միստիկական քերթվածները (օրինակ՝ Սոհրաբ Սեփեհրիի եւ այլոց բանաստեղծությունները) համարում են Հուշանգ Իրանիի ազդեցության հետեւանք:

ՎԱՐԱՆԴ

Իմ հոգում արե՛նն է Իրանի.

Իրանի արե՛նն է իմ հոգում:

«Չարենց – Նամն»

ՆԵՐՔՈՂ ԻՐԱՆԻՆ...

Ես սիրում եմ Իրանը
Իր գույնզգույն ցուրերով,
Քերթողների օրրանը՝
Մխտիկ, բոքիկ ուղբերով:
Ես սիրում եմ Իրանի
Ծովեզերքը թուլակաս,
Իրիկնային ազանի
Ծորանքները ողբակաս:
Չեմ մոռանա ես երբեք
Նոնեիրանզը Աավեի,
Սոսոպեղ հրաշեկ
Չայի, Դարբին Քավեի:
Խորասանը փիրուզե,
Սպահանը մոզական,
Սա իմ ոսկե Թավրիզն է՝
Հավերժաբոց ատրուշան:
Խուզիստանցի թեղվինին,
Բախտիարցուն ինձ եղբայր,
Լոդին, քուրդին, թուրքմենին
Ես կիիշեմ տեսաբար:
Ու այցերը Խաթունի՝

ՆԻՄԱ ՅՈՒՇԻՋ

ՀԵ՛Յ, ՄԱՐԴԻԿ

Հե՛յ, մարդիկ, որ նստած ծովափին ուրախ ու խնդում եք,
Մեկն հիմա սուզվում, խեղդվում է ծովում,
Այս գորշ ու ծանր ծովի ջրերում
Ձեռք ու ոտքերն է հուսահատ շարժում,
Մինչ դուք հարթած եք ձեր թշնամուն հարթելու երազով:

Մինչ թվում է ձեզ,
Թե կարեկցել եք թշվառին, խեղճին,
Որ տիրանաք կարողության ավելի,
Այն ժամանակ, երբ
Ավելի եք գոտեպնդվում.

Հենց այդ պահերին

Մեկը ջրում զուր իր կյանքն է զոհում:

Հե՛յ, մարդիկ, որ ծովափին խրախճանքի վայր ունեք,

Հաց՝ սփռոցին, հագուստ՝ հագիդ,

Մեկը ջրերից կանչում է՝ փրկե՛ք,

Ծանր ալիքը հարվածում է իր թաթով մահաբեր,

Բերանը բացում, վախից չոված աչքերով,

Ձեր սուվերն է տեսել իր մոլոր ճամփից,

Ձուր է կլել կապույտ փոսում,

Ու ամեն պահ հուսահատվում է, սուզվում.

Մերթ հանում է գլուխն ու մերթ

Ոտքը ջրից այնկոծ,

Հե՛յ, մարդիկ:

Հեռու ճամփից հսկում է այս աշխարհը,

Բանաստեղծուհի
ՓԱՐՎԻՆ ԷԸԹԵՍԱՄԻ

ՈՐԲԻ ԱՐՑՈՒՆՔԸ

Մի օր մի արքա անցնում էր գյուղով.
Ծափեր ու ողջույն՝ հազար տանիքից:
Նրանց մեջ մի որր հարցրեց երկյուղով.
- Այդ ի՞նչ շողեր են այք ծակում թագից:
Մեկն ասաց՝ ինչպե՛ս իմանա՞նք ի՞նչ է,
Պարզ է՝ շատ թանկ է, շքեղ է, ցինջ է:
Մոտեցավ պատավ կին մի կուզիկ, խիստ.
- Դա մեր արցունքն է, արյունը շիթ-շիթ.
Նա խաբել է մեզ՝ հովվի ցուպ, ծղոտ...
Հոտն այս գայլին վաղո՛ւց է ծանոթ:
Մյուլքատեր իմաստունն ավազակ է մի,
Չարաշահ արքան՝ մութացկան լկտի.
Նայե՛ք որբերի կրակ արցունքին,
Որ գիտնաք շողը ուրկի՛ց է գայիս:

.....

Փարվինն ասաց՝ շեղվածներին
Ի՛նչ օգուտ կա ճիշտ խոսքից,
Ո՛վ է նա, որ չի խոցվում խոր
Ուղի՞ղ խոսքի նիզակից...